**Մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Դաշտադեմի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (20 դասաժամ), ֆիզկուլտուրայի (8 դասաժամ), ինֆորմատիկայի (4 դասաժամ), երգ-երաժշտության (1.5 դասաժամ), կերպարվեստի (1.5 դասաժամ), աշխարհագրության (7 դասաժամ), բնագիտության (2 դասաժամ), անգլերենի (9 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրվանից մինչև հունվարի 27-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. փետրվարի 1-ին՝ ժամը 12:00-ին**, Դաշտադեմի միջնակարգ դպրոցում, հասցե՝ Լոռու մարզ, գ. Դաշտադեմ 7-րդ փողոց, 10-րդ շենք: Տեղեկությունների համար զանգահարել (098)08-58-98 հեռախոսահամարով: